



Լրատու Newsletter

ԳԵՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Ապրիլ 2020
Լրատու թիւ 18

Ողջոյնի Խօսք



ԱՆԻ

2020 թուականի յունւարի 12-ին սկսուեց 2019-20 ուսումնական տարւայ երկրորդ եռամսեակի աշխատանքները, թէ՛ աշակերտներն ու ծնողները և թէ՛ ուսուցչուհիներն ու հոգաբարձուները մեծ խանդավառութեամբ և ոգևորութեամբ վերադարձան վարժարան:

Ուսուցչուհիները սակայն շարունակեցին իրենց աշխատանքները հեռավար միջոցներով:

Զատկական տօների առթիւ ապրիլի 5-ին և ապրիլի 12-ին վարժարանի արձակուրդներ են:

ՎԱՆ

Յունւարի 26-ից ամէն կիրակի առաւօտեան ժամը 10-ից մինչև 10:30-ը ուսուցչուհիներից մէկը փորձի փոխանակման նպատակով, ներկայացնում էր իր դասաւանդման ընթացքում կիրառւող ամենահետաքրքիր և օգտակար մեթոդները:

Եթէ թագածահրի (coronavirus) տարածման վտանգը շարունակի, մենք ծնողներին լրացուցիչ կը տեղեկացնենք:

2019-2020 ուսումնական տարւայ երկրորդ եռամսեակի ընթացքում կատարած աշխատանքների մասին Դուք կը կարդաք այս համարում:

ԿԱՐՍ

Մարտի 8-ին Հայաստանից հրաւիրւած՝ տաղանդաւոր դերասան պարոն Արամ Յովհաննիսեանը վարժարանի երկրորդ դասարանից մինչև իններորդ դասարանի աշակերտների համար անցկացրեց դերասանական վարպետութեան դաս: Նոյն օրը մանկական հոգեբան տիկին Մարիանա Ֆրունջեանը նախակրթարանի և առաջին դասարանների աշակերտների համար անցկացրեց հոգեբանական դաս:

Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս ամսագրի պատախանատուներին՝ տիկին Լենա Գիւլխանճեանին տիկին Անուշ Գեղամեանին տիկին Անի Սիմոնեանին տիկին Մարինա Մարդանեանին:

Քրիստոս Յարեալ ի մեռելոց

Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի

Վարժարանի տնօրինութիւն՝
Ռուզաննա Թաթուլեան



Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակետները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:



Ընդհանուր Գիտելիքների Մրցույթ – Quiz Night

Ինչպես ընդունված է ամեն տարի, այս տարի նույնպես Փետրվարի 8ին Գևորգ Թահթաեան կիրակնօրյա ազգային վարժարանի սրահում Ծնողական յանձնախումբը և հոգաբարձուները կազմակերպեցին "Ընդհանուր գիտելիքի մրցույթ", որին մասնակցում էին նաև վարժարանի բարձր դասարանի աշակերտները: Մրցույթն անցավ շատ ուրախ, հետաքրքիր մթնոլորտում: Այն անցկացրեց Հայկ Արմադանյանը, ով իր գեղեցիկ հումորով է՛լ ավելի բարձր տրամադրություն հաղորդեց մասնակիցներիս: Հարցերը բազմազան էին և շատ հետաքրքիր, միննույն ժամանակ շատ ուսուցողական:

Ինչպես նախատեսված է, առավելագույն միավորներ հավաքած խմբին նվերներ հանձնվեցին: Հնարավորություն ունեցանք նաև համեստելու ծնողների կողմից պատրաստված համեղ կերակուրները:



Our school's annual social event that always creates a fun competitive atmosphere, took place on February 8th at Twyford Secondary School. The event was accompanied by delicious food and great company. The Parents' Committee presented an array of scrumptious dishes and made sure that everyone was catered for. The questions were prepared by Mr Hratch Tokatlian and the quiz was led by Mr Haig Armaghanian. A special thank you goes to all involved in organising our popular Quiz Night.



Ուսուցիչների վերապատրաստում



Ուսուցիչների վերապատրաստման նպատակով յունւարի 26-ից ամէն կիրակի առաւօտեան ժամը 10-ից-10:30-ը ուսուցչուհիներից մէկը ներկայացնում է իր դասաւանդման ընթացքում կիրառող ամենահետաքրքիր և օգտակար մեթոդները: Ուսուցչուհիները լուսաբանում և պարզաբանում են ներկայացուող հարցերը: Բոլոր ուսուցչուհիների ներկայացրած մեթոդներն էլ հետաքրքիր են և կիրառելի:

From January 26th, the teachers and the head teacher started to have weekly meetings in the morning before school starts – 10.00 to 10.30 am in order to share good practise. Each week a teacher presented to the rest of the group certain teaching methods and resources that they use and find effective in their lessons. These sessions were all well received by the teacher who found them interesting and informative. These meetings were also a chance for the teachers to interact and exchange ideas.



Սուրբ Վարդանանց Տօն

Աւանդոյթ է դարձել փետրւարին տօնել Վարդանանց հերոսամարտի տարեդարձը: Վարդանանց հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մէկն է: Այս տարի լրանում է Աւարայրի ճակատամարտի 1569 ամեակը:

1569 տարի է անցել Վարդանանց պատերազմից, սակայն նրա ոգին ու զօրութիւնն այնքան հզօր է ու տպաւորիչ, որ դարեր շարունակ մեր ժողովուրդը ոգեշնչւելով Վարդանանց հերոսների կերպարներով պայքարել է հանուն հայրենիքի ազատութեան և անկախութեան:

Այս տարի Գ Թահթեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանում փետրւարի 16-ին տօնեցինք Վարդանանց տօնը: Հանդէսին մասնակցեցին ինչպէս մանկապարտեզի և նախակրթարան դասարանների, այնպէս էլ բարձր դասարանների աշակերտները:



“The Battle of Avarayr was fought on 2 June 451 AD on the Avarayr Plain in Vaspurakan between the Armenian Army under Vardan Mamikonian and Sassanid Persia. It is considered one of the first battles in defense of the Christian faith”



Սուրբ Վարդանանց Տոն

Նրանք ներկայացրին Վարդանանցի խորհուրդն ու Հայի ոգին: Այն ոգին, որի շնորհիւ այդքան ցաւ ու տառապանք տարած հայր մնացել է հայ՝ չկորցնելով իր ինքնութիւնը, լեզուն և կրօնը: Աշակերտները գեղեցիկ երգեցին “Իմ հայրենեաց հոգի Վարդան” և “Վարդանը քաջ զօրավար” երգերը:



As per tradition, on the 16th February 2020, the Feast of Vartanantz was commemorated at school as the Battle of Avarayr is noted for being one of the most significant battles in the Armenian History. An event that inspires us even after 1569 years and reminds us of the struggles we overcame to keep our national identity and culture. The headteacher welcomed the parents and then, kindergarten teacher, Miss Vanouhi Bedrossyan introduced the pupils of different classes to recite poems to glorify our national hero and this sacred battle. The school choir also sang two songs related to the event.

The children realise very well that Vardan embodies the Armenian nation and the image of thousands of noble and courageous generals and soldiers of our Homeland.

All the parents enjoyed seeing their children sing and recite enthusiastically.





Պահքի ընթրիք Սուրբ Սարգիս եկեղեցում

Փետրվարի 28-ին Սրբ Սարգիս Եկեղեցում, եկեղեցական հսկում արարողությունից յետոյ, մեր հայրենակիցների համար՝ Պահքի ընթրիք մատուցեց Գ Թահթայեան Ազգային վարժարանի ուսուցչուհիները և հոգաբարձուները: Երեկոն անցավ հաճելի և ուրախ մթնոլորտում :

Ցատուկ շնորհակատություն դկտ Գագիկ Ստ. Սարգսեանին նւիրատութեան համար:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր իրենց թանկագին ժամանակն ու միջոցները տրամադրեցին այդ ընթրիկը կազմակերպելու համար:



On February 28th, following the Vigil Service at St Sarkis Church, a Lenten dinner was presented to all who came to the Gulbenkian Hall. The Lenten food was prepared and presented by teachers of K Tahta Armenian Community Sunday School. Special thanks go to those teachers who prepared all the vegan traditional tasty food and made the evening such a pleasant and successful event.



Տեր Շնորհք Քին. Բաղդասարեանի այցելությունը

Մարտի 1-ին Տեր Շնորհք Քին. Բաղդասարեանն այցելեց վարժարան: Նա բարձր դասարանի աշակերտներին բացատրեց Պահքի խորհուրդը, նրա դերն ու նշանակությունը իւրաքանչիւր քրիստոնեայի համար:

Այնուհետև Տեր Հայրը հանդիպեց վարժարանի տնօրինուհու և հոգաբարձուների հետ՝ քննարկելու հետագայ աշխատանքները:

On March 1st Friar Shnork Baghdasaryan visited school and explained the meaning and role of lent to the older pupils.

He then met up with the Headteacher and governors to discuss future activities and events taking place at school.



Պարոն Արամ Յովհաննիսեանի և Տիկ Մարիանա Ֆրունջեանի այցելությունը վարժարան

Մարտի 8-ին, դպրոց էինք հրաւիրել Հայաստանից յատուկ հրաւիրած, տաղանդաւոր դերասան Պարոն Արամ Յովհաննիսեանին և իր կնոջը՝ Տիկին Մարիանա Ֆրունջեանին:

Պարոն Յովհաննիսեանը 2-րդից 9-երորդ դասարանների աշակերտների համար դերասանական վարպետութեան դաս անցկացրեց:

Մասնագիտութեամբ մանկական հոգեբան՝ Տիկին Մարիանա Ֆրունջեանը նախակրթարանների և առաջին դասարանի աշակերտների համար անցկացրեց շատ հետաքրքիր հոգեբանական դաս: Այնուհետև նրանք հանդիպեցին վարժարանի տնօրինուհու և հոգաբարձուների հետ՝ քննարկելու հետագայ աշխատանքները:



On March 8th, we had a visit from the talented actor Aram Hovhannisyanyan and his wife Mariana Frounjyan, specially invited from Armenia.

Mr Hovhannisyanyan demonstrated to the pupils some breathing techniques and acting methods. Mrs Mariana Frounjyan, a child psychologist, worked with the younger children on a very interesting activity on how to express emotions. Afterwards, they met with the school's Headteacher and governors to discuss future cultural activities.



Հեռավար դասընթացներ



Չնայած 3 շաբաթ է դպրոցը փակ է, սակայն մեր ուսուցչուհիները շարունակում են կատարել դասաւանդման իրենց աշխատանքները: Առաջին երկու կիրակիները դասաւանդումն արեց հեռախօսով, Skype-ով կամ WhatsApp-ով: Սակայն վարժարանի տնօրինուհի Ռուզաննա Թաթուլեանը ուսուցիչներին ներկայացրեց ZOOM համակարգը, հրաւիրեց վիրտուալ ուսուցչական ժողով, օգտւելով ZOOM հարթակը բացատրելով այդ համակարգի առաւելութիւնները և հնարաւորութիւնները: Տիկին Մարիանա Հալաճ-Ասմինեան էլ ներկայացրեց իր փորձը, քանի որ նա արդէն մէկ կիրակի առաջ կիրառել էր այդ համակարգը:

Ուսուցչուհիների մի մասն սկսեցին կիրառել դասաւանդման հեռավար ուսուցման ZOOM հարթակը, որից թէ աշակերտներն ու ծնողները և թէ ուսուցչուհիները շատ գոհ էին: Աշխատանքները կը շարունակւեն:

A parent's comment:

“Just to confirm that my daughter's class had their lesson yesterday and I was VERY impressed at how our teachers and school have embraced the use of digital platforms in this new era that we find ourselves in.”

A teacher's comment:


“I have had my first lesson with all my pupils on Zoom today. It was quite good; the children were happy to see one another and actively participated in the lesson. This is obviously a better way of teaching than communicating with Whats App as it is interactive and also visual so it allows us to share our screen, resources, videos and has a whiteboard to write on.

It looks very likely that the current situation is going to last longer than anticipated but we could carry on our teaching and contact with each other virtually. At least we have technology....”

Despite the fact that our school has been shut for three weeks, our teachers carry on teaching and setting work for the pupils.

In the first two weeks, the teachers used different means like phone, Skype and Whats App to communicate with their pupils but then the Headteacher, Ruzanna Tatulian introduced the teachers to the video conferencing service Zoom and invited them to have a virtual meeting to discuss the possibilities and advantages of using Zoom. Some teachers were familiar with the tool like Mrs Mariana Asminian who had started using it the week before.

Teachers who have started using Zoom to teach their children virtually, have been very satisfied as were the parents and their children. Teaching and learning continues.



Խմբագիրներ՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան,
Տիկ Անուշ Գեղամեանին, Տիկ Մարինա Մարդանեան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլիսանճեան